



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 օգոստոսի 2021 թվականի թիվ 246-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՎՏԱՆԳԱՎՈՐ  
ՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՊԼԱՆԸ ՆՈՐ  
ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1180-Ն որոշման պահանջներով՝

որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման պլանը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝
  - 1) ՀՀ Տավուշի մարզի վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման պլանը՝ համաձայն հավելված 1-ի,
  - 2) Սահմանամերձ գոտուց ըստ տարիքային խմբերի տարահանված բնակչության հաշվարկը՝ համաձայն հավելված 2-ի,
  - 3) Տարահանված բնակչության տեղաբաշխման հաշվարկը՝ ըստ ընդունման բնակավայրերի՝ համաձայն հավելված 3-ի,
  - 4) Տուժած բնակչության սննդամթերքով ապահովման հաշվարկը՝ համաձայն հավելված 4-ի,
  - 5) Տուժած բնակչության սննդամթերքով ապահովման հաշվարկը ըստ տարիքային խմբերի՝ համաձայն հավելված 5-ի,
  - 6) Տուժած բնակչության առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովման հաշվարկը՝ համաձայն հավելված 6-ի,
  - 7) Տուժած բնակչությանը տրվող հագուստի, ներքնազգեստի և կոշիկի ապահովման հաշվարկը՝ համաձայն հավելված 7-ի,

8) Տուժած բնակչության անհրաժեշտ հագուստի և առաջին անհրաժեշտության ապրանքների հաշվարկը՝ համաձայն հավելված 8-ի,

9) ՀՀ Տավուշի մարզի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի ազդարարման սխեման՝ համաձայն հավելված 9-ի,

10) Բժշկական ապահովման ուժերի հաշվարկը՝ համաձայն հավելված 10-ի,

11) Տավուշի մարզի բնակչության տարահանման հաշվարկը՝ համաձայն հավելված 11-ի,

12) ՀՀ Տավուշի մարզի տարահանված բնակչության սննդով ապահովման հաշվարկը՝ համաձայն հավելված 12-ի,

13) Տավուշի մարզի ընդունող բնակավայրերի և ընդունման հավաքակայանների ցուցակը՝ համաձայն հավելված 13-ի,

14) Տավուշի մարզի բնակավայրերի ժամանակավոր տեղաբաշխման կետերի ցուցակը՝ համաձայն հավելված 14-ի,

15) ՀՀ Տավուշի մարզի երկարատև բնակության կետերի ցուցակը՝ համաձայն հավելված 15-ի,

16) Սահմանամերձ 10 կմ-անոց գոտուց տարահանված բնակչության երկարատև կետերի բնակչության ամրագրման հաշվարկը՝ համաձայն հավելված 16-ի:

ՄԱՐԶՊԵՏ

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

19.08.2021

X 

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

